ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Հայկ Արզումանի Հարությունյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

ք. Թբիլիսի (Վրաստան), 2017թ. մայիսի 24-ից 25-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Վրաստանի Էներգետիկայի նախարարություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Տարածաշրջանային համագործակցության հեռանկարների քննարկում, տարածաշրջանի երկրների հեռանկարների և նախաձեռնությունների, խնդիրների և շահերի միջև հավասարակշռության հաստատում, էներգետիկ ոլորտի զարգացումների վերաբերյալ փորձի կիսում, միջազգային դերակատարների և տարածաշրջանային գործընկերների հետ բարեփոխումների իրականացման խթանում, էներգետիկ ոլորտում ընդհանուր մոտեցումների և անհրաժեշտ միասնական նախագծերի մշակում:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Տարածաշրջանային պետությունների էներգետիկ շուկաների ինտեգրվածության մակարդակի վերլուծություն, դրանց միջև երկկողմ առևտրի իրականացման ներկայիս ծավալները և զարգացման հեռանկարները: Տարածաշրջանային պետությունների էներգետիկ շուկաների ազատականացման աստիճանը, այդ նպատակով վերջին տարիներին իրականացված բարեփոխումները: Վրաստանի անդամակցությունը Եվրոպական էներգետիկ Համայնքին՝ իբրև կայացած փաստ: Դրանից բխող քայլերը և ծագող պարտավորությունները, մասնավորապես էլկետրաէներգիայի ներքին մրցակցային շուկայի ձևավորման ուղղությամբ:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Համաժողովին մասնակցող երեք պետությունների էներգետիկ ոլորտի պատվիրակությունների ղեկավարները (փոխնախարարները) հանգամանորեն ներկայացրեցին Վրաստանում, Թուրքիայում և Հայաստանում էներգետիկ ոլորտում ընթացող զարգացումները՝ ինչպես արտադրական հզորությունների, այնպես էլ ենթակառուցվածքների և ինստիտուցիոնալ ուղղություններով: Բոլոր ելույթներում

անդրադարձ կատարվեց հատկապես վերականգնվող էներգետիկայի ոլորտին՝ մատնանշելով երեք երկրներում այդ ոլորտի զարգացման դինամիկան:

Քննարկվեց տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման գաղափարը՝ որպես էլեկտրաէներգետիկական համակարգերի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացման միջոց: Ելույթ ունեցողները նշեցին, որ, չնայած պետությունների միջև իրականացվող էլէկտրաէներգիայի առևտրին և դրա աճող ծավալներին, առևտրային հարաբերությունները բնութագրվում են որպես երկկողմանի սահմանային առևտուր: Միայն Վրաստանն է, որ առևտրային հարաբերություններ ունի հարևան բոլոր պետությունների հետ: Մասնավորապես, Վրաստան– Ադրբեջան, Վրաստան– Թուրքիա, Վրաստան– Ռուսաստանի Դաշնություն առևտրի ծավալները անհամեմատ մեծ են, քան Հայաստանի հետ: Մատնանշվեց, որ առկա են ենթակառուցվածքներ, որոնք քաղաքական նկատառումներով չեն օգտագործվում և հետևաբար չեն ծառայում իրենց բուն նպատակին՝ փոխշահավետ համագործակցությանը:

Հայկական պատվիրակության կողմից բարձրացվեց Իրանի Իսլամական Հանրապետության ներգրավվածության հարցը այս կարգի համաժողովներին՝ կարևորելով Հյուսիս–Հարավ էներգետիկ կամրջի ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները, այն է՝ ենթակառուցվածքների զարգացումը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տարածաշրջանային առևտրի զարգացումը պետք է միտված լինի էլեկտրամատակարարման անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացմանը, էլեկտրամատակարարման ծախսերի նվազեցմանը: Դրան է ուղղված նաև «Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և միջպետական առևտրի խթանման գործողությունների ծրագիր»-ը, որը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը: Տարածաշրջանային առևտրի զարգացման ընթացքը կախված կլինի նաև նշված ծրագրի իրականացման արդյունքներից: